

Կարեւոր մտցանք բնելու : «Փայտաքանդակ փորագրութիւն» յորջորջումով ծանօթ այս եղանակը տակաւն ի գործածութեան էր Զինատանի մէջ , Քս.է 2)՝ տարի՝ իսկ առաջ :

*** Յատազօղիմութիւնը միայն կարելի եղած է — — — — — շ — — — — — Գերմանացիի մը վիճակունեցաւ վերջապէս բախտը՝ մեծ առեղծուածը լուծելու , յետ երկար և տաժանագին հետազոտութեանց :

Հէ՛ն՛նէ՛ ԿԻԻԹԷՄՊԷԿԿ կը կոչուէր այդ մարդը , 1397 ին ծնած Մայանսի մէջ՝ ազնուական ընտանիքէ մը : Էր երիտասարդութեան մէկ մասն անցուց հօրենական տանը մէջ որ զարդարուած էր միջին դարու այլաբանական քանդակներով ու պատկերներով : Մուտքի դուռին վրայ քանդակուած կար հսկայ ցուլի մը գլուխը՝ սա արձանագրութեամբ . — «Ոչինչ կրնայ ինծի դէմ դնել» , որ զոգցես Կիւրեմպերկի կեանքին նշանաբանը եղաւ . և միքէ Տպագրութեան նշանաբանն ալ նոյնը չէ՞ :



ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀՆԱՐԻՉ
ԵՒ ՌԱԶՎԵՐԱՅ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ
ՀԵՆՆԷ ԿԻԻԹԷՄՊԷԿԿ

15 տարեկանին՝ հայրը կորսնցուց : 1420 ին հարկադրուեցաւ հայրենի երկրէն հեռանալու՝ Ֆոհտեռիք Գ.ի հանդիսաւոր մուտքին առթիւ պայքող խռովութեանց հետեւանօք , (բազաւորը դիմաւորելու համար հարուստներուն և ժողովրդային դասակարգին միջեւ ծագած կատաղի կռիւր) :

Կիւրեմպերկ հաստատուելով Սրբազպուրկ , գաղափարը կ'ունենայ ստեղծելու Յէ — — — — — Գարիճակի մը (գալլաք) միջոցաւ , իւզոտ մեյլանով ծածկուած , որով կարելի պիտի ըլլար բնագիրի մը օրինակներն անհուն քիւղով հանել բուդքի հէջերուն վրայ : Լման 10 տարի տքնեցաւ , հետամուտ ըլլալով բախանցելու մեծ գաղտնիքին և ընելու հրաշարուեստ գիւար , մէկ խօսքով՝ Տղ — — — — — :

Արդէն հասած էր գոհացուցիչ արդիւնքի մը , երբ անդրադարձաւ քէ պիտոճէն խանգարուած էր՝ իր անվերջ հետազոտութեանց երեսէն ենթարկուած ըլլալով մեծամեծ ծախսերու : Սակայն և այնպէս ոչինչ խրտօնցուց , ոչինչ ընկրկեցուց Աշխատութեան այս դիւցազնը՝ միշտ յառաջ իր վագքին մէջ : Երեք քաղքենիներ — Տօիճնայն , Ռիֆ և Հայման — ընկեր ըրաւ իրեն , որոնք բաւական մը դրամ դրին՝ գործը բոլորէն ծա-

ծուկ շարունակելու համար , իբր քէ հաշի շինելու նպատակով :

Կիւրեմպերկ կրցած էր փորագրել մետաղեայ շարժուն տառեր . կը մնար միայն ձեռք ձգել անա՛նկ նիւր մը կամ բաղադրութիւն մը որ յարմար ըլլար այդ տառերը բազմապատկելու և առաջադրուած նպատակին ծառայելու : Երկաթը շատ կարծր ըլլալուն՝ բուդքը կը ծակէր , կապարն ալ շատ կակուղ՝ կը ճգմուէր մամուլին ճշման տակ . գալով փայտին՝ ո՛չ ոյժ ունէր ան , ոչ ալ տոկունութիւն : Հարկ էր ուրեմն ինչ ինչ մետաղներու խառնուրդով յառաջ բերել տառեր՝ պատշաճ պնդութեամբ և ընդունակ դարիճակներու մէջ բափուելու :

Յանուզն ձեռնարկը դեպ ի կատարելութիւն և իրականացում ձամբայ կ'առնէր տակաւ , երբ դժբախտութիւնը նորէն՝ և կու գար այցելութեան՝ իրենց աշխատանոցը : Այդ անվերջ փորձերն ու տքնութիւնները սուղի նստած էին ամենուն ալ : Բոլորեին մէկ անկուտի մնացին : Փառապանծ յլացումը յամրով ամելու համար , արի ընկերները չվարանեցան յօժարակամ և անտրտուն ծախելու կարասի , գոհարեղեն ու ստացուածք , նոյն իսկ պա՛րտք ալ ընելու . ա՛յնքան վառ էր իրենց հաւատքը՝ գործին մեծութեան և զայն վարող մե՛ծ գործաւորին , Կիւրեմպերկի հանձնարին վրայ : Այդ գոհողութիւններն ալ սակայն ապարդիւն մնացին :

Եւ ձախողուածն իր լրումին հասաւ , երբ ընկերներէն Տօիճնայն 1439 ին մեռնելով՝ ընկերութիւնն ալ լուծուեցաւ : Պահանջատերեր դատ բացին որ շարունակուեցաւ բաւական և կան-